ԹԵՄԱ 5

ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ

5. «ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ» ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մայաները մինչկոլումբոսյան Ամերիկայում ապրող միակ ժողովուրդն էին, որոնց հաջողվել էր ստեղծել հիերոգլիֆային գիր: Ուսումնասիրելով Երկրի պտույտը Արեգակի շուրջը՝ մայա աստղաբաշխները և մաթեմատիկոսները ստեղծել էին օրացույց, որը բաղկացած էր 365 օրից: Այն ուներ 18 ամիս, յուրաքանչյուրը՝ 20 օր: Լրացուցիչ 5 օրը համարում էին վատ օրեր, ուստի մայաները աշխատում էին այդ օրերին ոչինչ չանել, նույնիսկ հաց չուտել: Մյուս՝ 360 օրերից բաղկացած օրացույցը կազմել էին կրոնական տոների, ծեսերի և գուշակությունների համար: